ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻԱՆՎԱՆ
ՀՊՄՀ
ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE ASPU
AFTER KH. ABOVYAN
CHAIR OF AGE AND PEDAGOGICAL
PSYCHOLOGY

ÐÅÑÏÓÁËÈÊÀ ÀÐÌÅÍÈß
ÌÈÍÈÑÒÅÐÑÒÂÎ ÎÁÐÀÇÎÂÀÍÈß È
ÍÀÓÊÈ
ÀÃßÓ ÈÌ. Õ. ÀÁÎÂßÍÀ
КАФЕДРА
ВОЗРОСТНОЙ И ПЕДАГОГИЧЕСКОЙ
ПСИХОЛОГИИ

Երևան – 10, Խանջյան - 5 | Ереван – 10, ул. Ханджяна – 5 Tel: (374 1) 59-70-21 | Yerevan – 10, 5 Khanjyan street

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2013 թվական

2013 թվականին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբոինն իրականացրել է ուսումնական, գիտահետազոտական, մեթոդական, կազմակերպչական բնույթի հետևյալ աշխատանքները.

- ✓ Ամբիոնը Հայաստանի Հանրապետության Գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բազայի վրա 2013 թվականի հուլիսի 1-5-ը կազմակերպել և իրականացրել է «Անընդհատ /շարունակական/ պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են 12 պետություններից ներկայացուցիչներ (ՌԴ, Ուկրաինա, Լիտվա, Սլովենիա, Լեհաստան և այլն): Այն հնարավորություն է ընձեռել ծանոթանալ տարբեր երկրների և մասնագետների պրակտիկայի վերաբերյալ տեսական պատկերացումներին, փորձին և տվյալ ոլորտի գիտական հետազոտություններին՝ հետագայում ՀՊՄՀ-ում հնարավորինս տեղայնացնելու համար: Օտարերկրյա աղբյուրները դրական արձագանք են տվել գիտաժողովին, մասնավորապես՝ Psychological Thought 2013 Vol.6 (2) 169-172 և 2.Problems of psychology in the 21st century 2013 Vol.6 4-5 միջազգային ամսագրերի խմբագրականներում, որոնք տարածվում են մոտ 150 երկրներում: Գիտաժողովի պրոբլեմատիկան և վերլուծությունները տպագրվել են նաև ŠVIETIMAS: POLITIKA, VADYBA, KOKYBĖ 5(2 ամսագրի 2013 թվականի (14) համարում (CONTEMPORARY UNIVERSITY PEDAGOGICAL PRACTICE: AN INTERNATIONAL CONTEXT):

- ✓ Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը 2013 թվականի ընթացքում մասնակցել է 10 միջազգային և հանրապետական գիտաժողովների, հրատարակել 40-ից ավելի գիտական հոդված:
- ✓ Ժամանակակից աշխատաշուկայում գործատուի պահանջներին համապատասխան 2013 թվականին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանություն բաժնի մագիստրատուրայում մշակվել և ներմուծվել է «Հոգեբանական խորհրդատվությունը կրթության համակարգում» մագիստրոսական մասնագիտացումը, պատրաստ են նշված մասնագիտության առարկայախմբի առարկայական ծրագրերը, առարկայական նկարագրերը (հայերեն և անգլերեն լեզուներով), օրացուցային թեմատիկ պլանները:

Ամբիոնն այս տարի առաջին անգամ նաև սպասարկում է Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական)» մագիստրոսական մասնագիտացումը, որի շրջանակներում մշակվել են շուրջ 10 նոր մասնագիտական դասընթաց, որոնք դասավանդվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից:

- ✓ Առաջատար բուհերի հետ միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով <<Կրթության նորարությունը և հեռանկարները հաջողության ակադեմիայի շրջանակում>> խորագրով միջազգային գիտաժողովի շրջանակներում կազմակերպվել է *«Ժամանակակից հոգեբանական պրակտիկում»* խորագրով օնլայն հանդիպում-քննարկումը՝ ՀՊՄՀ-ի, Չելյաբինսկի պետական մանկավարժական համալսարանի և հոգեախտորոշման կենտրոնի, Հայ-Ռուսական Սլավոնական, Պրահայի Կառլովի, Մինսկի պետական մանկավարժական և Ալմա Աթայի համալսարանների մասնակցությամբ, օնլայն քննարկման մասնակիցները՝ թվով 35 հոգի, ստացել են մասնակցության վկայագրեր և պայմանավորվածության համաձայն կշարունակվեն նմանատիպ հանդիպումները նաև դասախոսությունների ու պրակտիկ աշխատանքների կատարման ուղղությամբ:

- ✓Մոսկվայի քաղաքային հոգեբանա-մանկավարժական համալսարանի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում 2013 թվականի նոյեմբերի 7-13-ը փոխադարձ այցով Մոսկվայից Երևան են ժամանել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լյուդմիլա Օբուխովան և ՄՔՀՄ-ի Կրթության հոգեբանության ֆակուլտետի երկու մագիստրոս՝ ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հոգեբանական խորհրդատվությունը կրթության համակարգում» մագիստրոսական ուղղության դասընթացներին մասնակցելու նպատակով:
- ✓ Ելնելով բուհի՝ կադրերի համալրման քաղաքականությունից, 2013 թվականին ՀՊՄՀ շրջանավարտներից ամբիոնի աշխատանքերում, մասնավորապես՝ դասախոսական անձնակազմում, ներգրավվել է 1 ասպիրանտ՝ Նաիրա Սամվելի Հարությունյանը:
- ✓ Ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ Արման Բեգոյանը արժանացել է Ֆուլբրայթի լեհ-ամերիկյան հիմնադրամի կողմից հաստատված Լեյն Կիրկլանդի անվան կրթաթոշակի Լեհաստանի Պոզնան քաղաքի Միցկևիչի անվան համալսարանում և այնտեղ մասնակցել 7 ամիս տևողությամբ դասընթացների:
- ✓2013 թվականին ամբիոնում կազմակերպվել է թեկնածուական 2 ատենախոսության նախապաշտպանություն. 1) ՀՊՄՀ Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի հայցորդ Նազելի Սերյոժայի Հախվերդյանի «Մտածողության ոճերի դրսևորման առանձնահատկությունները իմացական խնդիրների բազմատարբերակային լուծման գործընթացում» վերնագրով (ԺԹ.00.01).-«Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ հ.գ.դ., պրոֆեսոր՝ Վ.Կարապետյան, 2) ՀՀ ԳԱԱ-ի Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ Նադեր Ջաֆարի Բալալամիի՝ «Ամուսնական կյանքից բավարարվածության և հուզական ինտելեկտի փոխադարձ կապը» (ԺԹ.00.01).-«Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ հ.գ.թ., դոցենտ Ռ.Պողոսյան:
- ✓Ամբիոնի աշխատակազմի, ասպիրանտների, հայցորդների և մագիստրոսների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով 2013թ.-ի հոկտեմբերի 10-11-ը Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական համալսարանի տարիքային

հոգեբանության ամբիոնի վարիչ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Ֆ.Օբուխովան ունեցել է բաց դասախոսություններ հետևյալ թեմաներով. 1) Պ.Յա.Գալպերինի տեսության հիմնական դրույթները, 2) Մանկական հոգեվերլուծությունը Ռուսաստանում, 3) Ֆիլիպ Արիես՝ <<Մանկական հագուստի փոփոխությունները տարբեր դարաշրջաններում և դրա արտացոլումը <<Մանկություն>> հասկացության ընկալման մեջ:

- ✓ Ամբիոնը ակտիվ համագործակցում է հանրակրթական մի շարք հաստատությունների հետ՝ Երևանի թիվ 177, Վ.Տերյանի անվ. թիվ 60, Ջ.Կիրակոսյանի անվ. թիվ 20, Գ.Ստեփանյանի անվ. թիվ 135, Գ.Նարեկացու անվ. թիվ 137 դպրոցների, «Անանիա Շիրակացի» կրթահամալիրի, թիվ 5 և 43 մանկապարտեզների հետ: Ամբիոնի դասախոսական անձնակազմը բաց դասախոսություններ է կազմակերպում վերը նշված կրթական հաստատությունների մանկավարժական անձնակազմի համար՝ ծանոթացնելով Տարիքային հոգեբանության առկա հիմնախնդիրներին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական գործընթացում:
- ✓ Հանրապետության ուսուցիչներին հոգեբանամանկավարժական հետազոտությունների արդյունքներին ծանոթացնելու նպատակով ամբիոնը ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ հրատարակում է <<Ընտանիք և դպրոց>> գիտամեթոդական ամսագիրը /տարեկան 5 թողարկում/, որի գլխավոր խմբագիրն է ամբիոնի վարիչ, հ.գ.դ., պրոֆեսոր՝ Վ.Կարապետյանը: Պարբերաբար ամբիոնի դասախոսները հրատարակում են իրենց հոդվածներն այս ամսագրում:
- ✓ 2012 թվականիցառ այսօր Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնը՝ ի դեմս ամբիոնի վարիչ հ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ս.Կարապետյանի համագործակցում է Problems of psychology in the 21st century և Problems of education in the 21st century միջազգային հեղինակավոր ամսագրերի հետ՝ հանդիսանալով խմբագրական խորհրդի անդամ: Ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Ռ.Պողոսյանը համագործակցում է "Психологический журнал"(Харьков) միջազգային հեղինակավոր ամսագրի հետ՝ հանդիսանալով խմբագրական խորհրդի անդամ:

✓2013 թվականից Տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնը համագործակցում է ՀՀ Շախմատի ակադեմիայի հետ, իրականացվում է «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման դժվարությունների և խնդիրների հետազոտում, բացահայտված խնդիրների վերլուծության արդյունքում «Շախմատ» ուսումնական առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստումներ ՀՀ տարբեր մարզերում: Ամբիոնի աշխատակազմը պարբերաբար մասնակցել է «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման հետ կապված սեմինար-քննարկումներին և հադես եկել հստակ գործնական առաջարկներով:

Տարիքային և մանկավարժական
հոգեբանության ամբիոնի վարիչ՝ **Վ. Ս. Կարապետյան**